

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. ՍՄՈՅՆ

ՀԻՆ ՀԱՐՑԱԴՐՄԱՆԸ ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄ

Հայտնի ճշմարտություն է. որ գիտության շարժիչ ուժը վարկածն է, այն կանխատեսումը, որը սկզբում շատերին է տարօրինակ թվում, սակայն ժամանակի ընթացքում գիտելիքների աստիճանական կուտակման ճանապարհով մի օր դառնում է անժխտելի իրողություն: Վ.Կատվայանի «Մեսրոպյան է, Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը» (Երևան, 2006, 104 էջ) ուսումնասիրությունը, հին հարցադրման վերաբերյալ նոր եզրահանգում լինելով հանդերձ, դժվար է վարկած անվանել, քանի որ այն բավականին փաստալից ու փաստարկված է, բայց, այնուամենայնիվ, պիտի ընդունենք, որ այս աշխատանքը և մոտեցման թարմությամբ, և կիրառած սկզբունքների ու եղանակների տեսակետից նոր հեռանկարներ է բացում հարցի վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների համար:

Մեսրոպյան է, Ե գրերի ուղղագրության և հնչյունական արժեքի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել, հսկայական փաստական նյութ է կուտակվել, իսկ դա նշանակում է որոշակի ավանդույթի առկայություն, որ, ինչպես նշել է աշխատանքի առաջաբանում պրոֆ. Վ.Համբարձումյանը, կարող է ոչ միայն նպաստավոր լինել, այլև կաշկանդող, եթե գիտական շրջանա-

ռության մեջ ես դնում ուսումնասիրության նոր մոտեցում: Ավանդույթը հաղթահարել կարելի է միայն խիստ գիտարկված, հաշվառված, համակարգված փաստերի առկայության դեպքում: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ հարցի վերաբերյալ տեսակետներ են հայտնել այնպիսի գիտնականներ, ինչպիսին են Ա.Սեյեն, Հր. Աճառյանը, Ս.Աբեղյանը, Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը, Ա. Աբրահամյանը, ապա պարզ կլինի, թե ինչպիսի դժվարություններ պիտի հաղթահարեր հեղինակը: Պետք է փաստել, որ դա հեղինակին հաջողվել է լավագույնս:

Լինելով հնդեվրոպական լեզու հայերենը կարող է այնպիսի լեզվական իրողություններ դրսևորել, որ արժևորվեն ընդհանրապես հնդեվրոպաբանության կողմից: Դրանով կարելի է բացատրել վերջին շրջանում հայերենի նկատմամբ աճած հետաքրքրությունը: Սյա տեսակետից համընդհանուր ուշադրության կենտրոնում է գրաբարը, մինչդեռ վերջինիս վերաբերող լեզվական բոլոր հարցերը չէ, որ միանշանակ պատասխաններ ունեն: Կան նաև չարգաբանված իրակություններ, և դա մասամբ առնչվում է նաև գրաբարի հնչյունական համակարգին: Հնչյունաբանական, հնչույթաբանական մի շարք հարցեր մնում են բաց, քանի որ

գործ ունենք գրաբարի գրավոր տարբերակի հետ Մնում է ապավինել գրավոր փաստերի տրամաբանությանը: Սիա այստեղ է, որ Վ. Կատվայանն իր աշխատանքում դրսևորում է նոր մոտեցում գրաբարյան իրողությունները համադրելով բարբառային փաստերի հետ: Գրաբարի և բարբառների հարաբերակցությունները երբևէ լուրջ ուսումնասիրությունների նյութ չեն հանդիսացել, մինչդեռ դա կարող է հանգեցնել անսպասելի արդյունքների: Ընդունված է գրաբարը համարել գրական հայերենի մի վիճակը, որը համեմատության եզրեր կարող է ունենալ մյուս վիճակների հետ: Ուսումնասիրություններն էլ կատարվում են հենց այս կտրվածքով: Գրաբարյան իրողությունները բարբառների օգնությամբ բացահայտելու հեղինակի մոտեցումը արդարացվում է նաև այնքանով, որքանով որ բարբառները հայերենի իրական գոյերն են և դրանով իսկ առավել գրաբարամետ, քան գրական հայերենի մյուս դրսևորումները:

Աշխատանքի առաջին մասում ներկայացնելով հարցի վերաբերյալ ցայսօր եղած տեսակետները այնու-

հետև Վ. Կատվայանը համակողմանի քննություն է կատարում է, Ե գրերի գրաբարում ունեցած ուղղագրական յուրահատկությունների, ըստ բառային դիրքերի բաշխման, արմատական շեշտակիր փակ վանկում դրանց դրսևորման առանձնահատկությունների ուղղությամբ: Բնականաբար առավել ճշգրիտ լինելու հանգամանքը հեղինակին թելադրում է օգտագործել և մինչ օրս կուտակված օգտակար նյութը, և փորձառական հնչյունաբանության հնարավորությունները, և, որ ամենակարևորն է, սեփական դիտարկումների արդյունքները: Ի վերջո, Վ. Կատվայանը է, Ե գրերի հնչյունական արժեքը որոշելիս հանգում է Ե գրի և երկբարբառակերպ (շեշտակիր վանկում), և ծայնավոր (անշեշտ վանկում) արտահայտելու տեսակետին:

Քննելով հնչյունափոխական իրողությունները, մեզ հասած գրավոր աղբյուրներում (ձեռագիր մատյաններ, վիմագիր արձանագրություններ) արտահայտված շփոթն ու շեղումները Վ. Կատվայանը ճշգրտում է նաև է, Ե երկբարբառակերպների պատմական հնչյունափոխության մոտավոր ժամանակը: